ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 345 – Ա

«ԱՐԾՎԱՆԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼՈՒՍԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ԳՈՌ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ և 160-րդ հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով «Արծվանիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լ. Հարությունյանի 20.07.2026թ.-ի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. «Արծվանիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լուսինե Հարությունյանին 2026 թվականի հուլիսի 21-ից օգոստոսի 24-ը ներառյալ տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդը՝ 25 աշխատանքային օր:

2. Արձակուրդում գտնվելու ընթացքում «Արծվանիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալ Գոռ Հովհաննիսյանին:

3. Լուսինե Հարությունյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 25-ից:

2026-07-20 16:57:15 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ Սյունիքի մարզպետ **Ռ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 20
Ք. Կապան